ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1994 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 15 հունիսի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Մուրադյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի հունվարի 30-ի N 87-Ա որոշմամբ 2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված «Մաքսային գործերում համագործակցության

և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը, Արձանագրության հավելվածը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ համապատասխանաբար՝ Համաձայնագիր և Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի հունիսի 1-ին Դուշանբե քաղաքում՝ Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով:

2. Համաձայնագիրը վավերացվել է Հանրապետության Նախագահի 1995 թվականի դեկտեմբերի 9-ի ՆՀ-531 հրամանագրով (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996թ. փետրվարի 26-ին):

Արձանագրությունը Ադրբեջանի Հանրապետության կողմից ստորագրվել է վերապահումով, ըստ որի՝ բացառությամբ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 4-րդ կետի, Համաձայնագրում շարադրված ոչ մի իրավունք, պարտականություն և դրույթ Ադրբեջանի Հանրապետության կողմից չի կիրառվի Հայաստանի Հանրապետության նկատմամբ:

3. Արձանագրության վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության կողմից վերապահում ներկայացնելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է հատուկ կարծիք՝ նշելով, որ Համաձայնագրի ոչ մի իրավունք, պարտա-

կանություն և դրույթ Հայաստանի Հանրապետության կողմից չի կիրառվի Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ, քանի դեռ չի կարգավորվել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը Ադրբեջանի Հանրապետության կողմից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ էթնիկ զտումների քաղաքականության կիրառման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ռազմական ագրեսիայի սանձազերծման հետևանք է:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Համաձայնագրի տեքստը փոփոխել Արձանագրության անբաժանելի մաս կազմող հավելվածին (այսուհետ՝ Հավելված) համահունչ, որտեղ ներկայացված է Համաձայնագրի նոր խմբագրությամբ շարադրված տեքստը:

5. Հավելվածով սահմանված բովանդակությամբ փոփոխվում են Համաձայնագրի նախաբանը, վերջաբանը, Համաձայնագրի 1-ին հոդվածը, 2-րդ հոդվածի «ա», «բ», «գ» ենթակետերը, 3, 4, 5, 8, 9, 14, 15, 16 և 17-րդ հոդվածների վերնագրերն ու տեքստերը, 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը (2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերը միավորվել են նոր խմբագրությամբ «դ» կետի ներքո), 7-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, 10-րդ հոդվածը, 11-րդ հոդվածի 1-ին կետը, 12-րդ հոդվածի 1-ին կետը, 12-րդ հոդվածի 2-րդ կետը ներառվել է նույն հոդվածի 10-րդ կետում, 3-րդ կետը՝ 11-րդ կետում, 13-րդ հոդվածը, 17-րդ հոդվածը (նոր 18-րդ հոդված):

6. Արձանագրությամբ Համաձայնագրում՝ Հավելվածով սահմանված բովանդակությամբ, ավելացվում են նոր դրույթներ՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետ, 2-րդ հոդվածի 2-րդ կետ, 2.1 և 2.2 հոդվածներ, 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ե», «զ», «է» ենթակետեր, 9.1, 9.2 և 9.3 հոդվածներ, 11-րդ հոդվածի 2-րդ կետի «զ», «է», «ը» ենթակետեր, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր, 12-րդ հոդվածի 4, 5, 6, 7, 8, 9, 12, 13 և 14-րդ կետեր, 14-րդ հոդվածի 2 և 3-րդ կետեր, 16-րդ հոդվածի 4, 5 և 6-րդ կետեր և նոր 18-րդ հոդված:

7. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրի փոփոխության արդյունքում ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները (սույն որոշման մեջ Սահմանադրական դատարանը չի անդրադառնում Համաձայնագրով ստանձնած այն պարտավորություններին, որոնք Արձանագրության ընդունման արդյունքում բովանդակային փոփոխության չեն ենթարկվել).

- ապահովել, որ Համաձայնագրի հիման վրա ՀՀ մաքսային մարմիններն իրենց իրավասության շրջանակներում և պահպանելով ՀՀ մաքսային օրենսդրությունը՝ փոխօգնություն ցուցաբերելու միջոցով համագործակցություն իրականացնեն Կողմերի պետությունների մաքսային մարմինների հետ՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված նպատակներով (Հոդված 2, կետ 1),

– ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ հարցում ներկայացնող կենտրոնական մաքսային մարմինների հարցումներն ուղարկվեն Կողմերի պետությունների՝ հարցում ստացող կենտրոնական մաքսային մարմիններին (Հոդված 2.1, կետ 2),

–ապահովել, որ Հայաստանի Հանրապետության՝ հարցում ներկայացնող տարածքային մաքսային մարմինների հարցումներն ուղարկվեն անմիջականորեն Կողմերի պետությունների՝ հարցում ստացող տարածքային մաքսային մարմիններին (Հոդված 2.1, կետ 3),

–այն դեպքերում, երբ հնարավոր չէ որոշել, թե Կողմի պետության ո՞ր մաքսային մարմին պետք է ուղարկել հարցումը, ապա ապահովել, որ հարցումները Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմնի կողմից ուղարկվեն մյուս Կողմի պետության կենտրոնական մաքսային մարմնի հասցեով (Հոդված 2.1, կետ 4),

–ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում Կողմերի միջև նամակագրությունը վարվի ռուսերենով (Հոդված 2.1, կետ 5),

–ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները՝ Կողմերի պետությունների մաքսային մարմինների հետ փոխադարձ համաձայնությամբ ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված մաքսային գործառնությունների (մաքսային ձևակերպման) իրականացման արագացմանը և մաքսային հսկողության

արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգի կիրառման միջոցով (Հոդված 3, կետ «ա»),

–ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության ցանկացած կենտրոնական մաքսային մարմնի ստացած տեղեկությունները, հաղորդումներն ու փաստաթղթերը, փոխանցվեն ՀՀ իրավապահ և այլ պետական մարմիններին, որոնք զբաղվում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ու դրանց պրեկուրսորների, ինչպես նաև այլ առարկաների և նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարով, տվյալ տեղեկությունները տրամադրած Կողմի պետության մաքսային մարմնի գրավոր համաձայնության առկայության դեպքում (Հոդված 5, կետ 3),

–ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները սեփական նախաձեռնությամբ կամ հարցման դեպքում մյուս Կողմերի մարմիններին անհապաղ փոխանցեն կատարված կամ նախապատրաստվող այն գործողությունների մասին անհրաժեշտ ամբողջ տեղեկությունը, որոնք հանդիսանում են կամ կարող են հանդիսանալ մաքսային օրենսդրության խախտում, ապրանքների դասակարգման, դրանց մաքսային արժեքի և ապրանքների ծագման, մաքսային վճարների հաշվարկի ճշգրտության, ինչպես նաև ՀՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների նկատմամբ արգելքների, սահմանափակումների և հսկողության պահպանման մասին տեղեկություններ (Հոդված 6, կետ 1),

–ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները հնարավորինս կարճ ժամկետում, այդ թվում՝ առանց նախնական հարցման, մյուս Կողմերի մաքսային մարմիններին հաղորդեն տեղեկություններ հնարավոր այնպիսի մաքսային իրավախախտումների մասին, որոնց դեմ պայքարում հատկապես շահագրգռված են Համաձայնագրի մասնակից պետությունները, որոնք, նախևառաջ, վերաբերում են մաքսային իրավախախտումներին, երբ տեղափոխվում են հատուկ կարևոր նշանակություն ունեցող և մաքսային մարմինների միջև համաձայնեցված ցանկերում ներառված ապրանքներ, որոնք ենթարկվում են ոչ սակագնային սահմանափակումների կամ ենթակա են բարձր մաքսատուրքերով կամ հարկերով հարկման, ահաբեկչական և (կամ) ծայրահեղական ուղղվածության կամ ազգամիջյան և

(կամ) միջկրոնական հիմքով թշնամանքի և երկպառակության հրահրման միտումներ պարունակող գրականություն, լսա- տեսա- և այլ նյութեր, պոռնոգրաֆիական բովանդակություն ունեցող տեսա- և այլ նյութեր, ապրանքներ, որոնց առնչությամբ հիմքեր կան ենթադրելու, որ դրանք նմանակված (կոնտրաֆակտ) են (Հոդված 6, կետ 2, ենթակետեր «դ», «ե», «զ», «է»),

–ապահովել, որ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի փոխանցումը կատարվի գաղտնիության պահպանման պայմաններով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (Հոդված 7, կետ 4),

–ապահովել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները մաքսային գործի բնագավառում տրամադրեն փոխօգնություն՝ նաև իրականացնելով պաշտոնատար անձանց նախապատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում և մաքսային օրենսդրության խախտումների դեմ պայքարի գործում փորձի փոխանակում (Հոդված 8, կետեր «ա» և «դ»),

–երաշխավորել, որ մի Կողմի պետության կենտրոնական մաքսային մարմնի հարցումով Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմինն ապահովի ստուգման անցկացումը՝ Համաձայնագրի 2.2-րդ հոդվածի «ա», «ե» կետերով նախատեսված հիմքերով (Հոդված 9),

–ապահովել, որ Համաձայնագրի շրջանակներում հարցում ստացող Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինն իրականացնի միայն Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ նախատեսված Համաձայնագրի 9.1 հոդվածի 3-րդ կետում շարադրված ընթացակարգային գործողությունները (Հոդված 9.1, կետ 3),

–ապահովել, որ հարցման հիման վրա Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները, որպես հարցում ստացող, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող կամ հիմնադրված անձանց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ծանուցեն հարցում ներկայացնող մաքսային մարմնի կողմից ընդունված, հարցման մեջ թվարկված և դրան կցված բոլոր փաստաթղթերի և որոշումների մասին (Հոդված 9.2),

–ապահովել, որ Համաձայնագրի մասնակից պետությունների մաքսային մարմինների կողմից իրենց պետությունների մաքսային օրենսդրության դրույթներին համապատասխան ձևակերպված՝ մաքսային հսկողության անցկացման արդյունքները, ինչպես նաև ընթացակարգային գործողությունների իրականացման արդյունքները և հարցումների հիման վրա ստացված նյութերը Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից ճանաչվեն որպես մաքսային իրավախախտումների վերաբերյալ գործերով ապացույցներ, և նշված գործերն այլ ապացույցների հետ մեկտեղ քննելիս ենթարկվեն գնահատման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն (Հոդված 9.3),

– երաշխավորել, որ Համաձայնագրի շրջանակներում ստացված ցանկացած տեղեկատվություն կօգտագործվի բացառապես Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից և միայն Համաձայնագրում նշված նպատակներով, և որ այլ նպատակներով այն կփոխանցվի կամ կօգտագործվի միայն այդպիսի տեղեկատվություն տրամադրած Կողմի պետության մաքսային մարմնի գրավոր համաձայնությամբ (Հոդված 14, կետ 1),

– երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկատվության մասով կապահովեն գաղտնիության նույնպիսի ռեժիմ, ինչպիսին համանման բնույթի և բովանդակության սեփական տեղեկատվության համար նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (Հոդված 14, կետ 2),

– Համաձայնագրի շրջանակներում չիրականացնել պետական գաղտնիք (պետական գաղտնիքներ) պարունակող տեղեկատվության փոխանակում (Հոդված 14, կետ 3):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2018 թվականի հունիսի 1-ին ստորագրված «Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

15 հունիսի 2021 թվականի
ՍԴՈ-1600